



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

03 մայիսի 2017 թվականի
Թիվ 87 -Ա, քաղաք Երևան

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «թ» կետերը Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով)՝ 2011 թվականի հունիսի 22-ի «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 221-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետի 1-ին ենթակետի «ժա» ենթակետը՝ Հանձնաժողովը՝

որոշում է

1. Հաստատել համակենտրոնացման հայտարարագրի լրացման վերաբերյալ ուղեցույցը՝ համաձայն հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԱԲՈՅԱՆ

Ուղեցույց

ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումը, մինչև գործողության մեջ դնելը, ենթակա է հայտարարագրման, եթե՝

➤ համակենտրոնացման մասնակիցների ակտիվների կամ հասույթի ընդհանուր արժեքը (չափը) կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների կամ հասույթի արժեքը (չափը) դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի որոշմամբ սահմանված ակտիվների կամ հասույթ(ներ)ի արժեքը (չափը)։

➤ համակենտրոնացման մասնակիցներից առնվազն մեկը որևէ ապրանքային շուկայում ունի գերիշխող դիրք։

Սույն ուղեցույցը կրում է խորհրդատվական բնույթ և նպատակ ունի դյուրացնելու իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից համակենտրոնացման հայտարարագրի լրացման գործընթացը։

1. Հայտարարագրի 1-ին բաժինը վերաբերում է *համակենտրոնացման տեսակին*: Այսպես.

• Հայտարարագրի 1-ին բաժնի 1.1 և 1.2 կետերում նշված իրավաբանական անձանց վերակազմակերպման տեսակները սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Մասնավորապես՝ իրավաբանական անձանց միացում է համարվում իրավաբանական անձի՝ այլ իրավաբանական անձին միանալը, որի դեպքում միացած իրավաբանական անձի իրավունքները և պարտականություններն անցնում են վերջինիս՝ փոխանցման ակտին համապատասխան: Իրավաբանական անձանց միաձուլման դեպքում նրանցից յուրաքանչյուրի իրավունքները և պարտականություններն անցնում են նոր առաջացած իրավաբանական անձին՝ փոխանցման ակտին համապատասխան:

Այն դեպքում, երբ իրավաբանական անձանց վերակազմակերպումն իրականանում է միացման ձևով՝ անհրաժեշտ է Հայտարարագրի 1-ին բաժնի 1.1 կետում որպես ընդլայնվող ընկերություն նշել այն իրավաբանական անձի անվանումը, որին անցնում են միացող իրավաբանական անձի (անձանց)

իրավունքներն ու պարտականությունները: Այսպես օրինակ՝ եթե «Ա» ընկերությունը ընդլայնվող ընկերություն է, իսկ «Բ» և «Գ» ընկերությունները միանում են «Ա» ընկերությանը, ապա 1.1 կետն անհրաժեշտ է լրացնել հետևյալ կերպ՝

1. Համակենտրոնացման տեսակը.	
1.1 Միացում	
Ընդլայնվող	«Ա» ընկերություն
Միացող	«Բ» ընկերություն
Միացող	«Գ» ընկերություն
Միացող	

Իրավաբանական անձանց միաձուլման ձևով կատարվող վերակազմակերպման դեպքում՝ անհրաժեշտ է Հայտարարագրի 1-ին բաժնի 1.2 կետում նշել միաձուլվող ընկերությունների անվանումները: Այսպես օրինակ՝

1. Համակենտրոնացման տեսակը.	
1.2 Միաձուլում	
Միաձուլվող	«Ա» ընկերություն
Միաձուլվող	«Բ» ընկերություն
Միաձուլվող	«Գ» ընկերություն

- Հայտարարագրի 1-ին բաժնի 1.3 և 1.4 կետերում, որպես փայաբաժին (ակտիվներ) ձեռքբերողին արդեն պատկանող համապատասխան փայաբաժնի (ակտիվների) տոկոս, անհրաժեշտ է նշել փայաբաժին (ակտիվներ) իրացնող (թողարկող) տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի (ակտիվների) այն տոկոսը, որն արդեն պատկանում է փայաբաժին (ակտիվներ) ձեռքբերող ընկերությանը (ֆիզիկական անձին): Այն դեպքում, երբ օրինակ՝ «Ա» ընկերությունը մինչև գործարքի իրականացումը «Բ» ընկերությունում ունի 5 տոկոս փայաբաժին և ցանկանում է ձեռք բերել «Բ» ընկերության փայաբաժնի 25 տոկոսը, ապա Հայտարարագրի նշված բաժինը կունենա հետևյալ տեսքը.

1. Համակենտրոնացման տեսակը.	
1.4 Փայաբաժնի ձեռքբերում	
Փայաբաժին ձեռքբերող	«Ա» ընկերություն
Փայաբաժին թողարկող	«Բ» ընկերություն
Ձեռքբերվող փայաբաժնի տոկոսը	25%
Փայաբաժին ձեռքբերողին արդեն պատկանող համապատասխան փայաբաժնի տոկոսը	5%

- Հայտարարագրի 1-ին բաժնի 1.5 կետում նշված իրավաբանական անձանց վերակազմակերպման տեսակը՝ միավորումը սահմանվում է «Տնտեսական

մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք): Մասնավորապես՝ միավորում է հանդիսանում տնտեսվարող սուբյեկտների ցանկացած միավորում, որի շնորհիվ մեկ տնտեսվարող սուբյեկտը կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդել մեկ ուրիշի որոշումների կայացման կամ մրցունակության վրա: Այսպես օրինակ՝

1. Համակենտրոնացման տեսակը.	
1.5 Միավորում	
Միավորման մասնակիցները	«Ա» ընկերություն
	«Բ» ընկերություն
Միավորման նկարագիրը	Համատեղ գործունեություն իրականացնելու վերաբերյալ պայմանագիր

2. Հայտարարագրի 2-րդ բաժինը վերաբերում է *համակենտրոնացման մասնակցի տվյալներին*:

Համակենտրոնացման մասնակից հանդիսացող ֆիզիկական անձի կողմից լրացվում է սույն բաժնի առաջին մասը: Այսպես օրինակ՝

2. Համակենտրոնացման մասնակցի տվյալները.	
Համակենտրոնացման մասնակից ֆիզիկական անձ	
անուն, ազգանուն, հայրանուն	Արմեն Արմենակյան Արմենի
անձնագրային տվյալներ	AK2222222
	սերիա, տրման ամսաթիվ, ում կողմից է տրվել
բնակության վայր	ՀՀ, ք. Երևան, Թումանյան 10, բն. 24
հաշվառման վայր	ՀՀ, Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Մյասնիկյան 5, բն. 18
հեռախոսահամար	010-11-11-11, 093-11-11-11, 099-11-11-11
էլ. փոստ	A.Armenakyan@gmail.com

Համակենտրոնացման մասնակից հանդիսացող իրավաբանական անձի կողմից լրացվում է սույն բաժնի երկրորդ մասը: Այսպես օրինակ՝

2. Համակենտրոնացման մասնակցի տվյալները.	
Համակենտրոնացման մասնակից իրավաբանական անձ	
անվանումը	«Ա»
կազմակերպարավական ձևը	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
գտնվելու վայրի (իրավաբանական) հասցե	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 25/3
գործունեության հասցե	ՀՀ, ք. Երևան, Աբովյան 14
հեռախոսահամար	060-22-22-22, 055-22-22-22
էլ. փոստ	info@A.am
պետական գրանցման ամսաթիվը	07.11.2014թ
պետական գրանցման համարը	11.111.1111
հարկ վճարողի հաշվառման համար	05555555

Սույն բաժնի վերջին կետում պահանջվող՝ իրավաբանական անձի գործունեության ոլորտներին վերաբերող տեղեկատվությունն անհրաժեշտ է ներկայացնել հնարավորինս բաղդատված: Այսպես օրինակ՝ եթե կազմակերպությունը իրականացնում է տնտեսական ապրանքների, մսամթերքի, մրգերի կամ այլ ապրանքների մանրածախ առևտուր (խանութ, կրպակ և այլն), ապա սույն կետն անհրաժեշտ է լրացնել հետևյալ կերպ.

2. Համակենտրոնացման մասնակցի տվյալները.	
Համակենտրոնացման մասնակից իրավաբանական անձ	
Իրավաբանական անձի գործունեության ոլորտ(ներ)ը	1 տնտեսական ապրանքների մանրածախ առևտուր
	2 մսամթերքի մանրածախ առևտուր
	3 մրգերի մանրածախ առևտուր

3. Հայտարարագրի 3-րդ բաժինը վերաբերում է *համակենտրոնացման հայտարարագրման հիմքերին*: Սույն բաժնում անհրաժեշտ է նշել այն հիմքերը՝ համաձայն որոնց համակենտրոնացումը ենթակա է հայտարարագրման: Համակենտրոնացման հորիզոնական, ուղղահայաց կամ խառը տեսակները սահմանվում են Օրենքով, իսկ համակենտրոնացման մասնակցի ակտիվների արժեքը և հասույթի չափը՝ Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 478-Ն որոշմամբ: Այսպես, եթե համակենտրոնացման մասնակիցներ են հանդիսանում «Ա» և «Բ» ընկերությունները, «Ա» ընկերությունը զբաղվում է էլեկտրաէներգիայի արտադրությամբ, «Բ» ընկերությունը՝ մանրածախ առևտրով, իսկ «Ա» ընկերության ակտիվների արժեքը («Ա» և «Բ» ընկերությունների ակտիվների ընդհանուր արժեքը) համակենտրոնացման գործարքին նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է 3 մլրդ դրամ, ապա որպես համակենտրոնացման հիմք անհրաժեշտ է նշել Հայտարարագրի երրորդ բաժնի երրորդ կետը: Այսպես.

3. Համակենտրոնացման հայտարարագրման հիմքը՝ նշելով համակենտրոնացման մասնակցի ակտիվների արժեքը և հասույթի չափը.	
1. հորիզոնական համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը գործարքին նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է առնվազն մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն դրամ կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների արժեքը գործարքին նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է առնվազն մեկ միլիարդ դրամ.	<input type="checkbox"/>
2. հորիզոնական համակենտրոնացման մասնակիցների հասույթների ընդհանուր չափը գործարքին նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է առնվազն երեք միլիարդ դրամ կամ մասնակիցներից առնվազն մեկի հասույթի չափը գործարքին նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է առնվազն երկու միլիարդ դրամ.	<input type="checkbox"/>

¹Սույն բաժնի 1-ից 5 կետերում նախընտրելի պատասխանի դիմաց անհրաժեշտ է դնել X նշանը:

3. ուղղահայաց կամ խառը համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը գործարքին նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է առնվազն երեք միլիարդ դրամ կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների արժեքը գործարքին նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է առնվազն երկու միլիարդ դրամ.	<input checked="" type="checkbox"/>
4. ուղղահայաց կամ խառը համակենտրոնացման մասնակիցների հասույթների ընդհանուր չափը գործարքին նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է առնվազն չորս միլիարդ դրամ կամ մասնակիցներից առնվազն մեկի հասույթի չափը գործարքին նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է առնվազն երեք միլիարդ դրամ.	<input type="checkbox"/>

Հայտարարագրի 3-րդ բաժնի 5-րդ կետն անհրաժեշտ է լրացնել այն դեպքում, երբ համակենտրոնացման մասնակից իրավաբանական անձը՝ Հայտարարագիրը լրացնելու պահին իր գնահատմամբ որևէ ապրանքային շուկայում ունի գերիշխող դիրք: Այսպես օրինակ՝

3. Համակենտրոնացման հայտարարագրման հիմքը՝ նշելով համակենտրոնացման մասնակցի ակտիվների արժեքը և հասույթի չափը.	
5. համակենտրոնացման մասնակիցներից առնվազն մեկը որևէ ապրանքային շուկայում ունի գերիշխող դիրք.	<input checked="" type="checkbox"/>
5.1 նշել այն ապրանքային շուկայի անվանումը, որտեղ համակենտրոնացման մասնակիցն ունի գերիշխող դիրք	
Գազավորված ըմպելիքների շուկա	

Հայտարարագրի 3-րդ բաժնում նշված համակենտրոնացման մասնակցի ակտիվների արժեքը և հասույթի չափը անհրաժեշտ է ներկայացնել գործարքին նախորդող ֆինանսական տարվա դրությամբ: Այն դեպքում, երբ տվյալ ընկերությունը նոր ստեղծված ընկերություն է կամ նախորդ ֆինանսական տարում ակտիվներ կամ հասույթ չի ունեցել՝ անհրաժեշտ է լրացնել հայտարարագրմանը նախորդող ամսվա վերջի դրությամբ ընկերության ունեցած ակտիվների արժեքը և հասույթի չափը:

4. Հայտարարագրի 4-րդ բաժինը վերաբերում է *համակենտրոնացման մասնակիցների միջև կնքվող գործարքի վերաբերյալ տեղեկատվությանը*: Սույն բաժնում անհրաժեշտ է ներկայացնել գործարքի գինը, արժույթը, վճարման եղանակը, ժամկետները և պայմանները: Այսպես օրինակ՝

4. Համակենտրոնացման մասնակիցների միջև կնքվող գործարքի գինը, արժույթը, վճարման եղանակը, ժամկետները և պայմանները.	
գործարքի գինը- 3 մլն, արժույթը- ՀՀ դրամ, վճարման եղանակը- կանխիկ, վճարման ժամկետները- 1 ամիս վճարման պայմանները - գործարքի գումարի 50 տոկոսը պետք է վճարվի անմիջապես պայմանագիրը կնքելիս, իսկ գումարի մնացած մասը՝ պայմանագիրը կնքելուց հետո՝ մեկամսյա ժամկետում և այլն:	

5. Հայտարարագրի 5-րդ բաժինը վերաբերում է գործարքի ֆինանսավորման միջոցներին: Գործարքի ֆինանսավորումը կարող է կատարվել վարկերի, փոխառությունների, սեփական և այլ միջոցների հաշվին: Այսպես օրինակ՝ Եթե գործարքի ֆինանսավորումը նախատեսվում է կատարել փոխառությունների հաշվին, ապա անհրաժեշտ է նշել փոխառություն տրամադրող անձի անվանումը, (ֆիզիկական անձի դեպքում՝ անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ՝ սերիա, տրման ամսաթիվ, ում կողմից է տրվել, իրավաբանական անձի դեպքում՝ անվանում, կազմակերպատիրավական ձև, հարկ վճարողի հաշվառման համար), փոխառության ծավալը և այլն: Եթե գործարքի ֆինանսավորումը նախատեսվում է կատարել վարկային միջոցների հաշվին, ապա անհրաժեշտ է նշել վարկավորում իրականացնող կազմակերպության անվանումը, տրամադրվող վարկի մեծությունը և այլն: Այն գործարքների դեպքում, որոնք նախատեսվում են իրականացնել վարկերի և/կամ փոխառությունների հաշվին, անհրաժեշտ է ներկայացնել նաև կնքվող պայմանագրի (և/կամ այլ փաստաթղթի) նախագիծը: Առկայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև կնքվող գործարքի կողմերի իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություն: Այսպես օրինակ՝

5. Տեղեկություն այն մասին, թե ինչ ֆինանսական միջոցների հաշվին է կատարվում գործարքը.
Գործարքը կատարվում է վարկային միջոցների հաշվին: Վարկը տրամադրվում է «Ա» ընկերության կողմից: Վարկի մեծությունը կազմում է 100 մլն դրամ:

6. Հայտարարագրի 6-րդ բաժինը վերաբերում է համակենտրոնացման մասնակիցների միջև նախկինում ունեցած համագործակցությանը: Այս բաժինն անհրաժեշտ է լրացնել այն դեպքում, երբ օրինակ՝ համակենտրոնացման մասնակիցները նախկինում միմյանց ապրանքներ և/կամ ծառայություններ են մատակարարել, համատեղ աշխատանքներ են իրականացրել: Սույն բաժնում անհրաժեշտ է լրացնել նաև համագործակցության ժամանակահատվածը: Այսպես, եթե համակենտրոնացման մասնակիցներն են «Ա» և «Բ» ընկերությունները ապա, որպես օրինակ, սույն բաժինը կարող է լրացվել հետևյալ կերպ.

6. Տեղեկատվություն համակենտրոնացման մասնակիցների միջև նախկինում ունեցած համագործակցության վերաբերյալ.
2015 թվականի առաջին եռամսյակի ընթացքում «Ա» ընկերությունը «Բ» ընկերությունից ձեռք է բերել տնտեսական ապրանքներ՝ N 111 մատակարարման պայմանագրի հիման վրա (կից ներկայացվում են պայմանագրի պատճենը)

7. Հայտարարագրի 7-րդ բաժինը վերաբերում է համակենտրոնացման նպատակ(ներ)ին, ակնկալվող արդյունք(ներ)ին և հետևանք(ներ)ին: Այսպես.

- Եթե համակենտրոնացման շրջանակներում «Ա» ընկերությունը ձեռք է բերում «Բ» ընկերության բաժնետոմսերը, ապա որպես նպատակ կարող են հանդիսանալ շահաբաժինների ստացումը, նոր ներդրումների իրականացումը և այլն: Համակենտրոնացման գործարքի արդյունքներն անհրաժեշտ է ներկայացնել հնարավորինս առարկայական: Այսպես օրինակ՝

7. Համակենտրոնացման նպատակ(ներ)ը, ակնկալվող արդյունք(ներ)ը և հետևանք(ներ)ը (առկայության դեպքում կցել համապատասխան փաստաթղթեր).
7.1 Համակենտրոնացման նպատակ(ներ)ը.
Շահաբաժինների ստացում
7.2 Կնքվող գործարքից ակնկալվող արդյունք(ներ)ը համակենտրոնացման մասնակիցների գործունեության վրա.
Համակենտրոնացման արդյունքում նախատեսվում է ընդլայնել ընկերության կողմից թողարկվող ապրանքատեսականին: Մասնավորապես՝ «Ա» ընկերությունը զբաղվում է ապակյա շշերով բնական հյութերի արտադրությամբ, իսկ համակենտրոնացման արդյունքում նախատեսվում է նաև իրականացնել պլաստմասե շշերով բնական հյութերի արտադրություն:

- Այն դեպքում, երբ 7.3 բաժնում համակենտրոնացման մասնակիցը նշում է, որ գործարքը չի կարող հանգեցնել գերիշխող դիրքի առաջացմանը՝ հարկավոր է նաև նշել՝ թե՛ ինչու: Սույն բաժնում նախատեսվում է նաև ներկայացնել տեղեկատվություն այն մասին, թե՛ ինչպես կարող է համակենտրոնացումն ազդել սպառողների շահերի վրա: Այսպես օրինակ՝

7. Համակենտրոնացման նպատակ(ներ)ը, ակնկալվող արդյունք(ներ)ը և հետևանք(ներ)ը (առկայության դեպքում կցել համապատասխան փաստաթղթեր).
7.3 Համակենտրոնացման հետևանք(ներ)ը.
Կարո՞ղ է համակենտրոնացումը հանգեցնել համակենտրոնացման մասնակցի գործունեության ոլորտում գերիշխող ազդեցության առաջացմանը (ամրապնդմանը)
Գործարքը չի կարող հանգեցնել գերիշխող դիրքի առաջացմանը, քանի որ համակենտրոնացման մասնակիցներն ունեն փոքր ծավալներ այն ապրանքային շուկաներում, որտեղ գործունեություն են իրականացնում:
Ինչպե՞ս կարող է համակենտրոնացումն ազդել սպառողների շահերի վրա
Համակենտրոնացումն իրականացվում է միևնույն շուկայում գործող ընկերությունների միջև և դրա արդյունքում նախատեսվում է կրճատել վարչական և իրացման կրկնվող ծախսերը և առաջացած տնտեսումներից գումարներն ուղղել սպասարկման որակի բարձրացմանը, նոր տեսականու թողարկմանը:
Համակենտրոնացումը ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ համակենտրոնացման մասնակցի և նրա մասնակցությամբ այլ տնտեսվարող սուբյեկտների գործունեության ոլորում առկա մրցակցային միջավայրի վրա
Համակենտրոնացումը կարող է խորացնել մրցակցությունը «գազավորված, կարբոնացված ըմպելիքներ» ապրանքային շուկայում, քանի որ փոքր ծավալներ ունեցող «Ա» ընկերությունը ներկայումս շուկայում գործող խոշոր ընկերությունների հետ մրցակցության արդյունքում հանդիպում է դժվարությունների, իսկ համակենտրոնացման գործարքով նախատեսվող ներդրումների արդյունքում կբարձրանա «Ա» ընկերության արտադրողականությունը՝ ընկերության արտադրանքը դարձնելով ավելի մրցունակ:
Այլ հետևանքներ

Այն դեպքում, երբ ընկերությունն ունի համակենտրոնացման հետևանքների վերաբերյալ հաշվարկներ, ուսումնասիրություններ, կանխատեսումներ, հարցման արդյունքներ, դրանք ևս անհրաժեշտ է կցել հայտարարագրին:

8. Հայտարարագրի 8-րդ բաժինը վերաբերում է *համակենտրոնացման մասնակցի ոչ ընթացիկ ակտիվներին*: Պահանջվող ցուցանիշներն անհրաժեշտ է ներկայացնել գործարքին նախորդող ֆինանսական տարվա դրությամբ, հաշվապահական հաշվառման գործող ստանդարտներին համապատասխան՝ ըստ հաշվային պլանի: Այն դեպքում, երբ ընկերությունը նախորդ ֆինանսական տարում ոչ ընթացիկ ակտիվներ չի ունեցել՝ անհրաժեշտ է լրացնել հայտարարագրմանը նախորդող ամսվա վերջի դրությամբ ընկերության ունեցած ոչ ընթացիկ ակտիվների արժեքը: Այն դեպքում, երբ համակենտրոնացման մասնակից տնտեսվարող սուբյեկտն ունի դուստր ընկերություններ կամ մասնակցություն այլ ընկերություններում՝ սույն բաժնում պահանջվող տեղեկատվությունը հարկավոր չէ լրացնել այդ ընկերությունների մասով: Այսպես օրինակ՝

8. Համակենտրոնացման մասնակցի ոչ ընթացիկ ակտիվների վերաբերյալ. (հազ. դրամ)		
1	ոչ ընթացիկ նյութական ակտիվներ այդ թվում՝	50 000
1.1	շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ այդ թվում՝	20 000
1.1.1	շենքեր	10 000
1.1.2	կառուցվածքներ	2 500
1.1.3	մեքենաներ և սարքավորումներ	3 000
1.1.4	տրանսպորտային միջոցներ	1 500
1.2	շահագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ	2 000
2	ոչ նյութական ակտիվներ	2 000
3	այլ ոչ ընթացիկ ակտիվներ	1 000

9. Հայտարարագրի 9-րդ բաժինը վերաբերում է *համակենտրոնացման մասնակցի հետ անձանց խումբ կազմող ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկատվությանը*: Այսպես օրինակ՝ «Ա» ընկերությունը ձեռք է բերում «Բ» ընկերության փայաբաժին և միաժամանակ Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Ա» ընկերության և «Գ» և «Դ» ընկերությունների միջև առկա են անձանց խմբի հատկանիշներ, իսկ «Գ» ընկերությունը «Ե» ընկերությունում ունի 15 տոկոսի չափով մասնակցություն: Սույն բաժինը անհրաժեշտ է լրացնել ինչպես «Գ», այնպես էլ «Դ» ընկերության մասով, անկախ այն հանգամանքից, որ «Դ» ընկերությունը մասնակցություն չունի այլ տնտեսվարող սուբյեկտներում: Սույն բաժնի աղյուսակի առաջին սյունակում անհրաժեշտ է լրացնել «Գ» («Դ») ընկերության անվանումը, երկրորդ սյունակում՝ «Գ» («Դ») ընկերության ՀՎՀՀ-ն, երրորդ սյունակում՝ Օրենքի համապատասխան կետը՝ համաձայն որի «Ա» ընկերության և «Գ» («Դ») ընկերության

միջև առկա են անձանց խմբի հատկանիշներ: Հաջորդ սյունակներում անհրաժեշտ է լրացնել այն տնտեսվարող սուբյեկտ(ներ)ի անվանում(ներ)ը, ՀՎՀՀ-ն, գործունեության ոլորտ(ներ)ը, որտեղ «Գ» ընկերությունը մասնակցություն ունի՝ վերջին սյունակում նշելով մասնակցության չափը: Այսպես օրինակ՝

9. Համակենտրոնացման մասնակցի հետ Օրենքի իմաստով անձանց խումբ կազմող իրավաբանական անձանց և այլ տնտեսվարող սուբյեկտներում մասնակցություն ունեցող ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկատվություն:						
Իրավաբանական անձի անվանումը	ՀՎՀՀ	Օրենքի իմաստով անձանց խումբ կազմելու հատկանիշ(ներ)ը	տնտեսվարող սուբյեկտի անվանումը	ՀՎՀՀ	տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտը	մասնակցության չափը (տոկոս)
«Գ» ընկերություն	01555555	Օրենքի 4-րդ հոդվածի անձանց խմբին վերաբերող մասի առաջին պարբերություն	«Ե» ընկերություն	01444444	շինարարություն	15%
«Դ» ընկերություն	01111111	Օրենքի 4-րդ հոդվածի անձանց խմբին վերաբերող մասի երկրորդ պարբերություն				

Այս բաժինը համակենտրոնացման մասնակցի հետ անձանց խմբի հատկանիշներ ունեցող ֆիզիկական անձի մասով լրացվում է միայն այն դեպքում, երբ տվյալ ֆիզիկական անձը մասնակցություն ունի որևէ տնտեսվարող սուբյեկտում: Եթե օրինակ՝ համակենտրոնացման մասնակից Արմեն Արմենակյանի հետ անձանց խումբ կազմող Կարեն Արմենակյանը «Զ» ընկերությունում ունի մասնակցություն, ապա Հայտարարագրի նշված բաժինն անհրաժեշտ է լրացնել հետևյալ կերպ.

9. Համակենտրոնացման մասնակցի հետ Օրենքի իմաստով անձանց խումբ կազմող իրավաբանական անձանց և այլ տնտեսվարող սուբյեկտներում մասնակցություն ունեցող ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկատվություն:						
Անուն, ազգանուն, հայրանուն	անձնագրային տվյալներ	Օրենքի իմաստով անձանց խումբ կազմելու հատկանիշ(ներ)ը	տնտեսվարող սուբյեկտի անվանումը	ՀՎՀՀ	տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտը	մասնակցության չափը (տոկոս)
Կարեն Արմենակյան Արմենի	AK1111111, 06.05.1996 թ, 053	Օրենքի 4-րդ հոդվածի անձանց խմբին վերաբերող մասի 11-րդ պարբերություն (եղբայր)	«Ձ» ընկերություն	01333333	Կաթնամթերքի արտադրություն	40%

10. Հայտարարագրի 10-րդ բաժնի 10.1 կետը վերաբերում է *ապրանքների արտադրության, ներմուծման, իրացման և արտահանման ցուցանիշներին*: Այս բաժնում տեղեկատվությունն անհրաժեշտ է ներկայացնել հնարավորինս բաղդատված: Այսպես օրինակ՝ եթե համակենտրոնացման մասնակիցը գործում է պահածոների արտադրության ոլորտում, ապա տեղեկատվությունը կարող է ներկայացնել ընդհանուր խմբերով՝ մրգային պահածոներ, բանջարեղենային պահածոներ և այլն: Եթե օրինակ ընկերությունը գործում է մանրածախ իրացման ոլորտում, ապա տեղեկատվությունը կարող է ներկայացնել տնտեսական ապրանքների, պարենային ապրանքների, ոգելից խմիչքների և նմանօրինակ այլ խմբերով:

Սույն բաժնի 10.2 կետում անհրաժեշտ է ներկայացնել համակենտրոնացման մասնակից իրավաբանական անձի հիմնական մրցակից հանդիսացող ընկերությունների վերաբերյալ տեղեկատվություն: Այսպես օրինակ՝

Սույն բաժնի 10.3 կետում անհրաժեշտ է ներկայացնել այն տնտեսվարող սուբյեկտ(ներ)ի անվանում(ներ)ը, ՀՎՀՀ-ն, գործունեության ոլորտ(ներ)ը, որտեղ

10.2 Համակենտրոնացման մասնակցի հիմնական մրցակիցների անվանումները և ապրանքային նշանները.		
մրցակից ընկերության անվանումը	ՀՎՀՀ	մրցակից ընկերության ապրանքային նշանի անվանումը
«Է» ընկերություն	033333333	x

համակենտրոնացման մասնակիցը մասնակցություն ունի՝ նշելով մասնակցության չափը: Այսպես օրինակ՝

10.3 Այն տնտեսվարող սուբյեկտ(ներ)ի անվանում(ներ)ը և գործունեության ոլորտ(ներ)ը, որտեղ ընկերությունը (փայաբաժին ձեռքբերող ֆիզիկական անձը) մասնակցություն ունի			
տնտեսվարող սուբյեկտի անվանումը	ՀՎՀՀ	տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտը	մասնակցության չափը (տոկոս)
«Ե» ընկերություն	01222222	Էլեկտրաէներգիայի արտադրություն	30%

Սույն բաժնի 10.4 կետում անհրաժեշտ է ներկայացնել համակենտրոնացման գործարքի և համակենտրոնացման մասնակիցների վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, որը կարող է նպաստել Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրությանը:

Հայտարարագրի 11-րդ բաժինը վերաբերում է *պահանջվող փաստաթղթերին*, որոնց շրջանակներում անհրաժեշտ է ներկայացնել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, աուդիտորական եզրակացությունը (առկայության դեպքում), համակենտրոնացման գործարքի իրականացման պայմանագրի նախագիծը, կանոնադրության պատճենը, համակենտրոնացման մասնակից ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության իրավունք (բաժնեմաս, բաժնետոմս) ունեցող անձանց վերաբերյալ տեղեկություն՝ նշելով մասնակցության իրավունք ունեցող անձի անուն, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը) և մասնակցության չափը (բաժնետիրական ընկերությունների դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև ընկերության մասնակիցների կազմը հավաստող համապատասխան փաստաթղթերը՝ արժեթղթերի սեփականատերերի ցուցակ, ռեեստրի քաղվածք և այլն), ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը, ինչպես նաև համակենտրոնացման վերաբերյալ ցանկացած այլ փաստաթուղթ:

Հայտարարագիրը լրացվում է Համակենտրոնացման մասնակիցներից յուրաքանչյուրի կողմից: Այն դեպքում, եթե Հայտարարագիրը լրացվում է ֆիզիկական անձի կողմից՝ Հայտարարագրի 3-րդ բաժնի 5-րդ կետը, համակենտրոնացման մասնակցի ակտիվների արժեքին և հասույթի չափին վերաբերող կետերը, 8-րդ բաժինը, 10-րդ բաժնի 10.1 և 10.2 կետերը ենթակա չեն լրացման: